

ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ԵՌԱՐԺԵՔ ԲԱՌԵՐԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

(Տարժամանակյա բեռնության փորձ)

Լ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Լեզվի տարժամանակյա կտրվածքում բառային նշանի բովանդակային կողմը՝ բառիմաստը, զանազան փոփոխություններ է կրում. այն կարող է ընդլայնվել, նեղանալ, ենթարկվել անցման կամ շրջման: Այդ կարգի փոփոխությունների ընթացքում բառը ձեռք է բերում նոր իմաստ. ընդ որում այդ նոր իմաստը կարող է արդեն բառի արտահայտած հասկացության ծավալի ընդարձակումը լինել, կարող է նոր հասկացություն արտահայտել կամ բառի ունեցած իմաստին զուգորդել, նրա հետ միաժամանակ գոյություն ունենալ, փոխարինել նրան և այլն¹:

Բառերի բովանդակային պլանում տեղի ունեցած այսօրինակ փոփոխությունները կարող են ազդել նրանց խոսքիմասային արժեքի վրա՝ երբեմն առաջ բերելով իմաստաարժեքային (մասնակի կամ լիակատար) տեղաշարժեր:

Բառիմաստի և խոսքիմասային արժեքի հարաբերակցված փոփոխությունները տեսականորեն կարելի է խմբավորել՝ տարբերակելով բառիմաստի ընդլայնումն ու արժեքի երկփեղկումը, բառիմաստի նեղացումն ու արժեք(ներ)ի կորուստը (մասնակի տեղաշարժեր) և բառիմաստի անցումն ու արժեք(ներ)ի փոխանցումը (լիակատար տեղաշարժեր)²:

Խոսքիմասային արժեքի որևէ կարգի փոփոխություն անցնում է մասնակի տեղաշարժերի միջանկյալ օղակով՝ արժեքի երկփեղկման ճանապարհով: Իմաստաարժեքային փոփոխությունների ընթացքում նորամուտ ձևաբանական արժեքը նախկին մայր արժեքի կողքին հանդես է գալիս իբրև ածանցյալ տարր. լեզվի տարժամանակյա կտրվածքում կատարած գործառույթով այն կարող է հավասարվել «մայր» արժեքին կամ նույնիսկ դառնալ գերակշռող խոսքիմասային իմաստ՝ աստիճանաբար դուրս մղելով պասիվացող նախնական իմաստն ու արժեքը:

Խոսքիմասային արժեքի երկփեղկումը կարող է հանգեցնել խոսքիմասային տարարժեքության, մի իրողության, որտեղ առկա են արտահայտությունների պլանում (ձևով) շտարբերվող և բովանդակության պլանում (իմաստով) հակադրվող միավորների խմբեր³:

1 Հմմտ. է. դ. Ա. Ղ ա յ ա ն. Ընդհանուր և հայկական բառագիտություն. Երևան, 1984, էջ 101:

2 Տե՛ս Լ. Խ ա շ ա տ Ր Յ Ա Ն. Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ. Երևան, 1985, էջ 20—26:

3 Դեռևս Թրակացին ու նրա մեկնիչները նկատել են, որոշ բառեր համատեղում են մեկից ավելի խոսքիմասային արժեքներ, ինչպես՝ ըստ, զկնի, յետ (մակբայ և նախադրություն), վասն, յաղազս, քան (շաղկապ և նախադրություն), ոչ (մակբայ և շաղկապ). շնայած հին հունարենում սրանց հոմանիշների մեծ մասն ունի ձևակաղմական տարբերություններ (II. Адонц. Дионисий Фракийский и армянские толкователи. Петроград, 1915, с. 30—37, 275):

Խոսքիմասային տարարժեք բառերը հին հայերենում ունեն երկարժեք, եռարժեք և քառարժեք դրսևորումներ՝ պայմանավորված տվյալ բառի՝ ձևաբանական տարբեր արժեքներով գործածվելու հանգամանքով⁴:

Հին հայերենի շրջանակներում Խոսքիմասային տարարժեք բառերի քրննությունը կարելի է կատարել երկու հայեցակետով՝ համաժամանակյա և տարժամանակյա:

Համաժամանակյա ֆենոթիպամբ կարելի է առանձնացնել տարարժեք բառերի այն շերտը, որ ձևավորվել է հայերենի զարգացման նախագրային ժամանակաշրջանում և իբրև ժառանգություն անցել է հին հայերենին: Խոսքիմասնավորեցնելով եռարժեք բառերի վրա՝ նկատենք, որ լեզվական այս գոյավիճակում կան զգալի թվով բառեր, որոնք արդեն ցուցաբերում են ձևաբանական բազմիմաստություն: Այդ բառերը տարարժեքությունն արտահայտում են սկզբնաձևային դրությամբ, առանց ձևակազմական փոփոխության և ստատիկ ձևով առկա են հին հայերենի բառային կազմում՝ երկփեղկված բառիմաստներով և Խոսքիմասային արժեքներով:

Այսպես, դիւր բառը V դարում հանդես է գալիս Խոսքիմասային երեք՝ ած. ||մկբ. ||գոյ. արժեքներով: Հմմտ. 1. «դյուրին, հեշտ. անդորր. հաճո» (ած.). «Բանիւք դիւր է առաքինանալ» (Ոսկ. Մ. Ա. 23); «Թերևս և դիւր իցեն հնարք իրացն կատարածի» (Նղ. 84); 2. «դյուրով, հեշտությամբ» (մկբ.). «Ոչ ըմբռնիցիս դիւր յայնպիսի ախտ» (Ոսկ. Մ. Ա. 11); 3. «անդորրություն, հանգստություն, հարթվայր» (գոյ.). «Երգեսցէ քնարաւ, և դիւր լիցի քեղ» (Ա. Թագ. ԺԶ 16)⁵; Տայցեմբ ընդ նոսա պատերազմ ի դիւրի (Կ. Թագ. Ի 23):

Հին հայերենի շրջանակներում դիւր բառի Խոսքիմասային տարարժեքությունը, փաստորեն, համաժամանակյա իրողություն է:

Տարժամանակյա մոտեցման դեպքում հիմք ընդունելով «Աստվածաշնչի» և դասական հայերենի գրական հուշարձանների բառային կազմը, հետևելով դրանց կրած իմաստաարժեքային հետագա փոփոխություններին՝ կարելի է առանձնացնել տարարժեք բառերի մի այլ շերտ ևս, որ ժամանակագրորեն ձևավորվել է լեզվի զարգացման հինհայերենյան գոյավիճակում (V—XII դարեր)⁶:

Հին հայերենի շրջանակներում Խոսքիմասային եռարժեք բառերը ձևավորվել են իմաստաարժեքային միարժեք>երկարժեք>եռարժեք և երկարժեք>եռարժեք փոփոխությունների մոդելներով:

4 Փարարի բերականներն այս կարգի բառերն անվանել են «միջակք» և մեծ մասամբ անդրադարձել Խոսքիմասային երկարժեք բառերին ու դրանց գործածությանը՝ վերջինս բխցնելով իմաստային դորժոնից (տե՛ս Գ. Ա. և տ ի ք ե ա ն. Քերականութիւն հայկական. Վենետիկ, 1815, էջ 194, 228, 535; Ա. Բ ա գ ր ա տ ու ն ի. Հայերէն բերականութիւն ի պէտս զարգացելոց. Վենետիկ, 1852, էջ 37—38, 223—224, 580; Մ. Չ ա մ լ ե ա ն. Քերականութիւն հայկազեան լեզուի. Շուշի, 1859, էջեր 165—166, 288—289):

5 Շատ հազվադեպ նշումներ կան նաև Խոսքիմասային երեք արժեքներ համատեղող բառերի մասին (տե՛ս Գ. Ա. և տ ի ք ե ա ն. նշվ. աշխ., էջ 129; Մ խ ի թ ա ր Ս ի ր ա ս տ ա ց ի. Քերականութիւն գրարառ լեզուի Հայկազեան սեռի. Վենետիկ, 1730, էջ 366):

6 Չնայած ունի նաև «հաճելի» ածականական իմաստ:

8 Ընդհանրապես պատմական բառարանի խնդիրն է բացատրել բառերի նշանակություններն ու դրանց կրած իմաստաարժեքային փոփոխությունները լեզվի զարգացման տվյալ կամ հետագա փուլերում: Ելնելով այն հանգամանքից, որ հայ իրականության մեջ շուրջն ալդ կարգի բառարան՝ Խոսքիմասային եռարժեք բառերի ձևավորման տարժամանակյա գործընթացի գիտական նկարագրությունը կփորձենք տալ հիմնականում ըստ ՆՀԲ մեծարժեք բառարանի տվյալների (չնայած հնարավոր է, որ ՆՀԲ-ն անտեսած լինի բնագրային որոշ նմուշներ, որոնց բացահայտումը կարող է ուղղում մտցնել տվյալ բառի իմաստաարժեքային տեղաշարժերի ժամանակագրության մեջ. հնարավոր այդ բացը լրացնելու համար անհրաժեշտության դեպքում բնագրային օրինակներ կվկայենք այլ աղբյուրներից):

Այսպես, ասպազին բառը V դարում խոսքիմասային միարժեք բառ է՝ «ձիասարք, ձիու սպառազինությունը» գոյականական իմաստներով: Հմմտ. «Եւ հանեալ յասպազինէն զներդեայ քիմիտապատ պարանն՝ ճահ դիպեցուցանէ յուս ձախակողմանն» (Խոր. 230): «Իսկ նորա... ասպազէնն առեալ կապէր ի թիկունս իւր (Ապաթ. 109):

Լեզվի պատմական զարգացման ընթացքում, բառիմաստի ընդլայնման դործոնով պայմանավորված՝ ասպազին-ը ձեռք է բերել «խիստ սպառազեն, դինավառ» (ածականական) եւ «ձիու գենք ու զարդով հանդերձ» (մակբայական) իմաստներ ու արժեքներ, որոնք հանդիպում են IX դարի մատենագրության մեջ: Հմմտ. «Վաղի առաւօտուն ցուցանեմ ձեզ փիղս վառեալս եւ ի վերայ ասպազէնս ի քաջացն, որ տեղացեն ի վերայ ձեր անձրեւ նետս երկաթեղենս» (Արծր. Բ 3),—ած.: «Արիաբար, առնաբար, առնազէն, ասպազէն ի վերայ շահատակեալք... ընդ կրունկն դարձուցանէին» (ՅՀ. կթ. 296),—մկբ.: «Ասպազէն, առնադէն զնոսա վառեալ՝ շուէ գնայ» (ՅՀ. կթ. 356),—մկբ.:

Պատմական իմաստաբանության տեսակետից՝ լեզվում արձանագրվել են միարժեք և երկարժեք > եռարժեք (մասնակի) տեղաշարժեր՝ տարարժեքության առաջադրումով:

Հին հայերենում ավելի գործուն է երկարժեք > եռարժեք տեղաշարժերի մոդելը: Այսպես, ձրի բառը V դարում հանդես է գալիս գոյականի եւ մակբայի խոսքիմասային արժեքներով. 1. «նվեր, պարգև, բնծա» (գոյ.). «Մեծ է պահպանութիւնդ խաչի ձրի... արդ մի վասն ձրոյն արհամարհեր դու զգորշմըն, այլ վասն այսորիկ առաւել եւս մեծարեա դու զբարեբարն» (Կոչ. Ժգ): 2. «դուր, ընդունայն, անվարձ» (մկբ.). «Մի՞թէ ձրի պաշտիցէ Յոբ զՏէր» (Յովբ. Ա 9): «Ոչ ձրի, այլ վարձուցն փոխարինակ ըմբռնեսցեն զարքայութիւնն» (Ագաթ. 365):

VII—VIII դարերից սկսած՝ մատենագրության մեջ այն գործածվում է ածականական նշանակությամբ՝ «ձրիական, անվարձ»: Հմմտ. «Գերեաց գերեղարձ առնէր եւ ամենեցուն շնորհէր զյանցանս նոցա ձրի թողութեամբ» (Ղև. 99): Ձրի թողութիւն եւ շնորհիւ որդեգրութիւն» (Շիր.), «Ձրի դեղօք բշշկեաց դմէզ» (Իգն.): «Տուրք ձրի՝ շնորհք կոչի» (Խոսր.):

Բառիս իմաստաարժեքային փոփոխությունների գործընթացը տեղի է ունեցել դարձյալ լեզվի տարժամանակյա կտրվածքում՝ խոսքիմասային տարարժեքության ծավալի ընդարձակումով:

Այս կարգի բառերի իմաստափոխական ուղու հետազոտությունից հնարավոր է որոշել, թե երբ է բառը երկփեղկվել իմաստային դաշտով, կամ էլ երբ է ընդարձակվել նրա ձևաբանական բաղմիմաստության ծավալը. մի հանգամանք, որ դժվար է կիրառել նախագրային հայերենի իմաստաարժեքային փոփոխությունների բնութագրելիս: Իմաստափոխության ու խոսքիմասային արժեքի տեղաշարժերի երևույթը, լեզվի զարգացման միևնույն փուլի շրջանակներում թե դրանից դուրս, միշտ կրում է տարժամանակյա բնույթ. բառերը միանգամից չեն երկփեղկվում բառիմաստով ու խոսքիմասային արժեքով կամ էլ կտրուկ չեն ձեռքազատվում տրոհված իմաստից ու արժեք(ներ)ից:

Հին հայերենի բառային կազմում զգալի թիվ են կազմում այն եռարժեք բառերը, որոնք, ըստ ՆՁԲ-ի, V դարում համատեղում են խոսքիմասային երկու արժեքները:

Տվյալ դեպքում մեղ հետաքրքրում են այն եռարժեք բառերը, որոնց իմաստաարժեքային փոփոխություններն ընթացել են հին հայերենի ներսում:

Այդ կարգի բառերը, որպես սկզբնաձևային միավորներ, V դարում հանդես են եկել ածական||գոյական եւ ածական||մակբայ արժեքներով:

7 Երկարժեքության առաջացման ակունքները, որոշ առումով, դարձյալ տանում են լեզվի զարգացման նախադրային ժամանակաշրջան:

Այս տեսակետով էլ կարելի է քննել հին հայերենում ձևավորված խոսքիմասային եռարժեք բառերը՝ ելնելով դրանց ձևաբանական արժեքների նախնական գործառույթներից:

Ա. Գոյական||ածական>մակբայ իմաստարժեքային տեղաշարժերը հետևանք են այդ խոսքի մասերի իմաստային ու գործառական աղերսների. ածականն իր խոսքիմասային արժեքով աղերսվում է թե՛ գոյականի, թե՛ մակբայի հետ: Գոյականի հետ նա հարաբերակցվում է մեծ մասամբ փոխանուն կիրառությամբ (հատկանիշը՝ անվան փոխարեն), իսկ մակբայի հետ՝ հատկանշային ընդհանուր գաղափար արտահայտելով (առարկայի հատկանիշը՝ գործողության կամ հատկանիշի հատկանիշի փոխարեն):

Այս առթիվ Ա. Բագրատունին նկատել է. «Փոխադրություն կամ փոխանակություն (իմա՝ փոխանունություն—Լ. Խ.) է ձև, որով մի ինչ փոխանակ միևնույն դեմքի մի մասն բանի փոխանակ այլոյ, գոյական փոխանակ ածականի և ածական փոխանակ գոյականի կամ մակբայի»⁸:

Լեզվի պատմական զարգացման ընթացքում գոյ. ||ած. երկարժեք բառերի մեջ կարող է զարգանալ նոր նշանակություն: Այսպես, հին հայերենի հետդասական և հաջորդ փուլերում տեղի է ունեցել բառույթի տարարժեքության ծավալի ընդարձակում՝ երկարժեք>եռարժեք փոփոխությունների մոդելով. խոսքիմասային գոյ. ||ած. տարարժեքության շրջանակներում ձևավորվել են մակբայական նշանակություն ու արժեք:

Այս կարգի բառերի նախնական խոսքիմասային իմաստն ու արժեքը հնարավոր է պարզել ստուգաբանական եղանակով: Այսպիսի մոտեցման դեպքում կարելի է առանձնացնել եռարժեք բառերի երկու խումբ՝ հիմք ընդունելով տվյալ բառի նախնական խոսքիմասային իմաստն ու արժեքը:

1) Եռարժեք բառեր, որոնք նախապես ունեցել են գոյականի արժեք: Իմաստարժեքային փոփոխությունների գործընթացում առարկայի անվանումը կարող է ձեռք բերել նաև առարկայի հատկանիշի իմաստ՝ շարահյուսական մակարդակում կատարելով որոշիչի դեր, ձևությամբ ձևաբանականում ցուցաբերելով խոսքիմասային տարարժեքություն:

Ինչպես ասացինք, լեզվի տարժամանակյա կտրվածքում բառի խոսքիմասային տարարժեքության շրջանակները կարող են ընդարձակվել՝ ներառելով նոր իմաստ ու արժեք:

Փորձենք քննել գոյ. ||ած. արժեքներ համատեղող այն բառերը, որոնք հին հայերենում ընդարձակել են ձևաբանական բազմիմաստության շրջանակները՝ ներառելով նաև մակբայի խոսքիմասային արժեք:

Այդ բառերից են՝ դաշն, խրոխտ, ողորմ, զուգամասն, շտապ, տեղակալ և այլն:

Բառիմաստի և խոսքիմասային արժեքների պատմական քննությունը ցույց է տալիս, որ այդ բառերը լեզվի զարգացման միևնույն գոյավիճակի չէին ընդունում իրենց իմաստարժեքային դաշտով ցուցաբերում են խոսքիմասային երկարժեք-եռարժեք հարաբերություն:

Հմտ. դաշն—1. «դաշինք, ուխտ, երդում» (գոյ.). «Ստույթին ինչ մտցէ ի դաշինս» (Բ. Մակ. ԺԴ 28): «Առնուլ զօրիորդն Այանաց ի կնութին իւր, և դաշինս և ուխտս հաստատել ընդ ազգի քաջացն» (Խոր. 178): 2. «կանոնավոր, չափավոր, ներդաշնակ, համերաշխ» (ած.). «Նղիցի դաշն ընդ միմեանս՝ ընդ մեզ և ընդ քեզ» (Մնն. ԻԶ 28):

Հին հայերենի հետդասական շրջանում, օրինակ «Վարք սրբոց հարանց» ժողովածուում արդեն բառս հանդիպում է «մեղմիվ, մեղմով, դաշնություն» մակբայական նշանակությամբ ու արժեքով: Հմտ. «Նուազ խօսել և դաշն նայել» (Վրք. հց. Բ):

⁸ Ա. Բագրատունի. նշվ. տեղ., էջ 517: Տե՛ս նաև Գ. Աւետիքեան. նշվ. տեղ., էջ 194—195:

Ձուգամասն—1. «Հավասար մաս կամ բաժին» (գոյ.). «Մէջն ծաւրիցն՝ զուգամասամբն առաւելու և առաւելանի» (Փիլ. Ժ բան): 2. «Հավասարակողմ» (ած.). «Որ առ մեզ է լոյս, գիշերաւ հատանի, և հատանէ զգիշեր՝ զուգամասն» (Ածաբ.):

VIII—IX դարերում Ա. Շիրակացին և Բ. Արծրունին այն արդեն գործածում են մակբայական արժեքով՝ «մասերը հավասար պահելով» նշանակությամբ. «Ի նայի ուղղանկիւնեացն առ զտրամագիծն միջին, զամենայն հարթ, զուգամասն յարմարեալ անվնաս պահէ» (Շիր.): «Ի միասին զուգամասն պայազատեալ դահլենկալ թագաւորական զարմ» (Արծր. Գ 11):

Խրոխտ—1. «Հպարտութիւն, համարձակութիւն» (գոյ)⁹. «Տիրեաց ի վերայ իմ ծառայականն խրոխտ» (Պիտ.): 2. «Հպարտ, համարձակ, ամբարտավան» (ած.). «Լցեալ խրոխտ ամբարհաւաճութեամբ ի բանսն» (Պիտ.):

XII դարում Ն. Լամբրոնացու «Տեսութիւն առակաց Սողոմոնի» գործում հանդիպում է «խրոխտաբար, հանդգնորեն» մակբայական արժեքով. «Բնական է առիծուն խրոխտ յարձակել ի վնաս մարդկան (Լմբ. առակ):

Ողորմ—1. «գութ, կարեկցանք, ողորմութիւն» (գոյ.) «Զի յաւիտեան է ողորմ նորա» (Դանի. Գ 89): «Յողորմ դուք խանդաղատեալ» (Գ Մակ. Ե 27): 2. «աղիողորմ, թշվառ, ցավալի, ողորմելի» (ած.). «Ի ձայն ողորմ լայս (Գ Մակ. Ա 3): «Զհարգ ողորմ և բազում արտասուաց արժանի պատիժս պատահասից յանձն իւր առնու» (Ոսկ. 34. Ա 9):

Հին հայերենի հետգասական շրջանում «ցավելով, կարեկցաբար, ցավալի կերպով» իմաստներով ձեռք է բերել նաև մակբայի խոսքի մասային նշանակություն ու արժեք. «Զհայրն Աբրահամ ողորմ աղաչէր» (Գանձ.): «Կարի ողորմ խօսեսցի և յեղուկս անկանիցի» (ՆՂԲ, 2, 510):

Նշելով հատկանշային իմաստ արտահայտող խոսքի մասերի ձևաբանական ու շարահյուսական աղբյուրներից՝ կարելի է եզրակացնել, որ խնդրոտ առարկա եռարժեք բառերի մակբայական իմաստն ու արժեքը ձևավորվել են բառույթի տրոհված ածականական արժեքից:

2) Եռարժեք բառեր, որոնք նախապես ունեցել են ածականի արժեք:

Ածականական ծագումով որոշ երկարժեք բառեր հին հայերենում ընդարձակելով ձևաբանական բազմիմաստություն շրջանակները, հանգել են եռարժեքության: Այդ կարգի բառերի իմաստաարժեքային փոփոխություններն ընթացել են ած. լզոյ. տեղաշարժերի ուղիով: Անցման այս ուղին տար-

մկբ

բերակում ենք՝ կրկնելով հին հայերենի բառային կազմի և խոսքի մասային արժեքների հարաբերակցված քննությունից: Այդ բառերից են՝ անբաւ, այլազոյն, անխմռ, նախասլատիւ, ամօթալի, անինչ, կրկնակ և այլն:

Հմտ. ամօթալի—1. «անվայել, անարժան, զազրելի» (ած.). «Նախատեաց զնոսա արքայ ամօթալի բանիւք» (Խոր. 286): «Ամօթալի ախտիւ զազրազործ էր» (Խոր. 306): 2. «զարչելի՝ անարգ բան» (գոյ.). «Իմ իսկ լուեալ է զայդպիսի աղէտս ամօթալեաց» (Խոր. 347): «Մածկել զամօթալին արժան է, քան թէ ի մէջ բերել» (Փիլ. Նխ. Բ):

Այնուհետև, գործածվելով «ամոթով լի» նշանակությամբ՝ այն ձեռք է բերել մակբայի խոսքի մասային իմաստ ու արժեք.

Մերկ և ամօթալի ելանելոց եմ յերկրէ (Վրբ. Հց. Բ): Այնուհետև հանդերձեալ ես ամօթալի ժուժկալելի (Կլիմաք.):

Անխմռ—1. «խմորի խառնուրդ չպարունակող» (ած.). «Եղիցիք նոր զանգուած, որպէս էքդ անխմռ» (Ա Կորն. Ե 7): «Մի՛ ի խմորն չարութեան և անզգամութեան, այլ յանխմռ ստուգութեան» (Ա Կորն. Ե 8): 2. «հաց, բաղարջ» (գոյ.). «Արարին զտօն անխմռիցն դեօթն օր» (Բ Մնա. ԼԵ 17):

⁹ Տե՛ս 2 ր. Ա ճ ա ո յ ա ն. Հայերեն արմատական բառարան. հ. 2, Երևան, 1971, էջ 432: ՆՂԲ-ն նախնական է համարել բառիս ածականական իմաստը (1,994):

Այնուհետև ածականի հատկանշային իմաստի ընդլայնման հետևանքով բառն ձեռք է բերել «առանց խմորի, հացով» նշանակություն և մակրայի խոսքիմասային արժեք, որպիսի իմաստով ու արժեքով գործածվել է VIII դարից սկսած: Հմմտ. «Արժան է և զհացն անխմոր հանել ի սուրբ սեղանն» (ՅՀ. Իմ.): Խմորուն հացի և կամ յանխմոր կատարել զաստուածային խորհուրդն» (Շ. Թղթ.):¹⁰

Այլագոյն—1. «դժգույն, տարագույն. տարբեր» (ած.). «Եւ եւ նոյն ի նորին բնութենէ, որ այլագոյնք են (Ագաթ. 330): «Եւ բոյսս են այլագոյնք և՛ հոտովք, և՛ համովք (ՅՃԽ. Դ): 2. «ուրիշ, օտար գույն» (գոյ.). «Շլագոյն իցէ արածն, և յայլագոյն շիցէ փոխեալ ի մորթն (Ղևտ. ԺԴ 6): «Իբրև զածուխ սևացուցեալ զնոսա՝ յայլագոյնս դարձուցանէ» (Ագաթ. 260):

Ներսես Շնորհալու մոտ, XII դարում, այն գործածվում է անխառն մակրայական արժեքով՝ «ուրիշ կերպով. հեթանոսի նման»: Հմմտ. «Այլագոյն մեկնեն»¹¹:

Անինչ—1. «չբավոր, աղքատ. ընչագուրկ» (ած.). «Եթէ չկարիցես անինչ և առանց կարասոյ լինել, տաշիր աղքատաց յընչիցն զոր ունիցիս» (Ոսկ. Մ. Բ 20): «Անընչին ոչ հակառակել ընդ փարթամին» (Պիտ.): 2. «չեղած՝ անգո բան. ոչինչ» (գոյ.). «Սովոր ես զանինչսն յինչ ածել, և յոչնչէ ի լինելութիւն արարածոցս» (Ագաթ. 56):

Հետագայում ածականի հատկանշային իմաստի ընդլայնման հետևանքով անցել է «առանց ունեցվածքի, մերկ» նշանակության և միևնույն բառույթի շրջանակներում համատեղել նաև մակրայի խոսքիմասային արժեք. «Ի մանկութենէ իւրմէ անինչ և միայն ընթանայր» (Վրթ. Հց. է):

Ինչպես ցույց է տալիս բառիմաստի պատմական քննությունը, նախագրային հայերենից ժառանգած գոյ. ||ած. արժեքներ համատեղող որոշ բառեր լեզվի զարգացման տարժամանակյա կտրվածքում ընդարձակել են ձեռվարանական բազմիմաստության շրջանակները՝ ներառելով նաև մակրայի խոսքիմասային արժեք: Հին հայերենի գոյավիճակում այդ կարգի բառերը բնութագրվում են խոսքիմասային երկարժեք > եռարժեք հարաբերությամբ:

Բ. Ածական||մակրայ տեղաշարժերը պայմանավորված են այդ խոսքի

գոյական

մասերի ձևաբանական ու շարահյուսական արժեքների որոշակի աղերսներով: Ածական||մակրայ աղերսները պայմանավորված են նրանց բառական ընդհանուր իմաստով. այն է՝ հատկանշի ընդհանուր գաղափար արտահայտելով: Ածականն ու մակրայը շարահյուսական մակարդակում կարող են փոխարինել միմյանց՝ հանդես գալով ինչպես որոշչային, այնպես էլ պարագայական կիրառությամբ¹²:

Իմաստային ու գործառութային ընդհանրության հիմքի վրա հայերենի զարգացման նախագրային շրջանում բազմաթիվ ածականներ ձեռք են բերել նաև մաքուր խոսքիմասային իմաստ ու արժեք՝ ենթարկվելով խոսքիմասային միարժեք > երկարժեք մասնակի տեղաշարժերի: Ածական||մակրայ երկարժեք որոշ բառեր, փոխանցվելով հին հայերենի բառային կազմի մեջ, լեզվի զարգացման տարժամանակյա կտրվածքում ընդարձակել են ձևաբանական բազմիմաստության շրջանակները՝ հանդես գալով որպես խոսքիմասային եռարժեք բառեր:

10 Ձևայած մակրայական արժեքը պայմանավորված է ի նախորդով, հմմտ. անխնայ > յանխնայ:

11 V դարում այլագոյնք-ը իմե. ինչ թարմատարների հետ ժայլ կերպ, ուրիշ կերպ, այլաբար իմաստներով գործածվում էր մակրայի արժեքով: Հմմտ. «Այլագոյն իմն վարէ զաղհահամարն (Ոսկ. Մտթ.), (տե՛ս Մ. Ս ա լ չ ա ն թ ե ա ն. Քերականութիւն զբարառ լեզուիս Հայոց. Ի Մոսկով, 1827, հ. Ա, էջ 245):

12 Տե՛ս Ա. Բ ա գ ր ա տ ու ն Ի. նշվ. աշխ., էջ 223, 580:

Ինչպես ցույց են տալիս փաստերը, ած. մկբ. արժեքներ համատեղող բառերը, ենթարկվելով խոսքի մասային մասնակի տեղաշարժերի, ներառել են հիմնականում դոլականի խոսքի մասային արժեք, որ նյութազորվել է բառույթի երկփեղկված ածականական արժեքից: Այս տեղաշարժերը պայմանավորված են, մեծ մասամբ, ածականի փոխանուն կիրառության հանգամանքով, երբ հատկանիշը գործածվում է անվան փոխարեն:

Ուրվադժեկով հին հայերենի գոյավիճակում ած. մկբ. ձգոյ. եռարժեք բառերի ձևավորման տարժամանակյա գործընթացը և հետևելով իմաստաարժեքային տեղաշարժերի ընդհանուր օրինաչափություններին՝ կարելի է ասել, որ այդ կարգի բառերը ծագել են ած. մկբ. խոսքի մասային մասնակի տեղաշարժերի ուղիով:

գոյ.

Այդ բառերից՝ են՝ անառաջնորդ, դեռ, յորդոր, անհուն, խոտորեակ, քաղցր և այլն:

Ելակետ ունենալով V դարում այս բառերի ունեցած խոսքի մասային երկարժեքությունը՝ տարժամանակյա կտրվածքով փորձենք քննել դրանց կրած իմաստաարժեքային փոփոխությունները հին հայերենի շրջանակներում: Այսպիսիս՝

Անհուն—1. «անեզր, անսահման, րնդարձակ. անթիվ» (ած.). «Արդարություն իբրև գհեղև անհուն» (Ա Մովս. Ե 24): «Ի տարածանել սգդի մարդկան ի մէջ րադմակոյտ սկայիցն, անհուն խօյաց և ուժաւորաց» (Խոր. 32): 2. «անչափ, անընդգրկելի» (մկբ.). «Թագաւորն Հայոց Արտաշէր անհուն սկսաւ ողորանիլ յանառակ ցանկութիւնս» (Խոր. 346):

Այնուհետև ածականական իմաստների վրայով անցնելով «խորություն, անդունդ» առարկայացված հասկացության նշանակության՝ բառս ձեռք է բերել նաև դոլականի խոսքի մասային արժեք. «Զիա՞րդ ընդ անհուն յայնկոյս անցանէին» (Վրբ. Հց. 9):

Դեռ—1. «տակավին, մինչև հիմա, այժմ» (մկբ.)¹³. «Զուր դեռ ունէր դամենայն երեսս երկրի» (Մնն. Ը 9): «Անօրէնութիւնն իմ դեռ րնկղմէր զիս» (Ես. ԻԱ 4): 2. «նոր, միայն, նորոգ» (ած.)¹⁴. «Այն ինչ դեռ տէգ մուրումացն ի վերայ ծնօտիցն բուսանէր» (Փարպ. 5): «Ահա դեռ թույացեալ մեղկի ի լոյծ առաջնորդեաց կնիք սուանդոց անարատ քարոզութեան սրբոյն» (Փարպ. 27):

Ներսէս Լամբրոնացու գործերում, XII դարում, հանդիպում է արդեն գոյականի արժեքով՝ «տարիք, ժամանակ. հասակ» իմաստներով. «Մարմնոյդ հասակդ առոյգ և գործասէր, մինչև է ի դեռ ծերութեան հասեալ»:

Յորդոր—1. «համաձայն, համամիտ, մտադիր. դյուրին» (ած.). «Ճանաչելով ի նոյն խորհուրդ շարութեան յորդոր և զկամս Միհրենբսհի» (Փարպ. 152): «Պիտոյ է յորդորս, արթունս և զուարթունս լինել» (Ոսկ. Մ. Ա 6): 2. «հոգարակամ, ինքնակամ» (մկբ.). «Եթէ զձեզ յորդոր և յօժար տեսանիցեմք դարձեալ առ աստուածութիւն անդր» (Ագաթ. 129): «Փափագելի ցանկութեամբ յորդորս առ ինքեանս գործեսցեն զմարդիկ (Պիտ.)»:

Այնուհետև, լեզվի զարգացման ընթացքում յորդոր բառը հատկանշային իմաստից անցել է «հորդորություն, մխիթարական բան» առարկայական նշանակության ու գոյականի արժեքի. «Յորդոր տօնիս ձեր յիշատակ» (Շար.): «Յերկիւղ կամի ածել, և յորդոր՝ ի հաւատս» (Բրս. մրկ.):

Քաղցր—1. «անուշ. ախորժալի, գեղեցիկ. բարի» (ած.). «Յօրինեալ են բաժակք ի մատունս... կազմեսլ զըմպելի քաղցր և անուշ դինի ուրախութեան ամենեցուն» (Ագաթ. 253): «Առ քաղցր հեքայեցիս ողջոյն յոյժ» (Բ. Մակ. Բ 19): 2. «քաղցրությամբ» (մկբ.). «Քաղցր ի քուն լիցիս» (Առակ. ԻԳ 24):

¹³ Նախապես ունեցել է մակրայի արժեք:

¹⁴ Իմաստային անցման համար հմտ. ղեռածին (նորածին, մատաղ), ղեռահատակ (նորահատակ, մանուկ), ղեռամուռ (նորամուտ), ղեռաբողբոջ (նորաբողբոջ, մատաղ) և այլն:

Գրիգոր Նարեկացու և Արիստակես Լաստիվերտցու գործերում (X—XI դարեր) բառս հանդիպում է չքաղցրություն. մեղր» առարկայական նշանակությամբ ու գոյականի արժեքով. «Նս ընդ նոսին իբր դառնութիւն եղեալ ընդ քաղցու» (Նար. 206): «Յովհաննէս մարախով և վայրենի քաղցու կերակրեալ լինէր» (Լաստ.):

Ինչպես ցույց է տալիս բառիմաստի պատմական քննությունը, հին հայերենի գոյավիճակում հատկանշային իմաստներ համատեղող տարարժեք բառերի շրջանակներում գոյականական արժեքի հավելումը հետևանք է բառույթի հատկանշային իմաստի աստիճանական առարկայացման գործոնի: Ընդ որում, իմաստարժեքային այսօրինակ փոփոխություններն ընթացել են հիմնականում ած. ||մկբ. արժեքներ համատեղող բառերի շրջանակներում:

Գ. Մակբայ ||նախադրություն տեղաշարժերը նույնպես պայմանավորաժամակա՞ն

ված են այդ խոսքի մասերի ձևաբանական ու շարահյուսական որոշակի աղերսներով:

Մակբայ ||նախադրություն արժեքների համատեղող որոշ բառեր գրաբարին են փոխանցվել նախագրային շրջանից և երկփեղկված իմաստներով ու արժեքներով էլ գործածվել են հին հայերենի գրական հուշարձաններում: Մակբայի և նախադրության ձևաբանական ու շարահյուսական աղերսները պայմանավորված են վերջինիս ծագման հանգամանքով: Նախադրությունը, ծագած լինելով նյութական բովանդակություն ունեցող խոսքի մասերից, այդ թվում նաև՝ մակբայից, իմաստային ու գործառական առումով շփման եզրեր է պահպանում իր ծագման աղբյուրի հետ: Այդ կարգի բառերը, միայնակ հարելով բայական անդամին, դիտվում են իբրև մակբայ (մինչև աւարտեաց, իբրև ուսաւ, Ռափէս ասացեր), որպես նախադրություն, խնդիր առնելով, կառուցվելով հանդես են գալիս իբրև բայական անդամի լրացում (մինչև ի քաղաքն, իբրև ղկինամօն, Ռափէս զոսկի)¹⁵:

Բառույթի մակբայական արժեքից կարող է ճյուղավորվել ածականական արժեք՝ պայմանավորված այդ խոսքի մասերի ունեցած հատկանշային ընդհանուր իմաստով ու պարագայական կիրառությամբ. «Բնական մակբայք, որոնց էական պաշտօն է՝ յարիլ ի դիմատր բայս միայն, առ նախնիս իբրև ածական անուն յարին ի գոյական անուանս, յաներևոյթ բայս, յընդունելութիւնս, յածական անունս»¹⁶:

Հին հայերենում այդօրինակ իմաստարժեքային փոփոխություններ են կրել աղբյուրը և մերձ բառերը, որոնք նախագրային փուլում ունեցած երկարժեքության նկատմամբ ցուցաբերում են եռարժեք հարաբերություն:

Այսպես, աղբյուր 1. «զույգ, միասին, նույն տեղում» (մկբ.). «Այլ մեք զկարգն կանովնելով, աղբյուր և զՄարաց թագաւորսն» (Խոր. 67): «Աղբյուր ևս ունիցիմք զդիրահասոյց քաջալերիչն» (Ագաթ. 247): 2. «մերձ, մոտ» (նխդր.). «Երկու առիւծունք կային աղբյուր ձեռացն» (Գ Թագ. Ժ 19): «Սկիզբն արասցու յաղագս պատուականութեան մաղղկանն, նախակարգեալ ի գիրսս աղբյուր Արտաշիսի» (Խոր. 145):

Այնուհետև բառիս մակբայական նշանակությունը աստիճանաբար ներառել է «առաջիկա, մերձակա. ներկա» դարձյալ հատկանշային իմաստներ, և VIII—IX դարերում այն ձեռք է բերել նաև ածականի խոսքիմասային արժեք. «Յաղբյուրք դաւաճանութեանց խոյս տալ, և յապառնեաց պահել զինքեանս»: «Յաղբյուրքեցն երակաց քարշէ բնութեամբ զնորբն արին» (Նիւս. Բն. Բ, ԻԳ): «Յուրտն աղբյուր կենակից նմին բարույն ընդմիջէ» (Նար. 216):

¹⁵ Տե՛ս Մ խ ի Թ ա Ր Ս և ր ա ս տ ա ց ի. նշվ. աշխ., էջ 190: Վ. Չ ա լ լ ի ս ու ն. նշվ. աշխ., էջ 167:

¹⁶ Մ. Ս ա լ լ ա ն Թ և ա ն. նշվ. աշխ., էջ 244:

Մերձ—1. «մոտ. մինչ, մինչև. ներկա» (մկբ). «Եւ իմացեալ իմ զմերձ լինելն նորա ի տուն իմ՝ փախեալ» (Խոր. 34): «Մերձ համարեալ հոգեով՝ յիշեցէք» (Աղաթ. 430): 2. «մոտիկ, կից» (նխդր.). «Գայ հասանէ ի հիւսիսի ...մերձ ի տունն կաղմեայ» (Խոր. 34): «Մերձ առ լերամբն ոչ թողուցանէր այլում պարապել գործոյ» (Խոր. 228):

Այնուհետև մակբայական իմաստի վրայով ձեռք է բերել «մերձավոր, մոտիկ, առաջիկա» նշանակություն և VIII—IX դարերում գործածվել է ածականի խոսքիմասային արժեքով¹⁷. «Ով մերձդ ի հեռուստ հաստատուն երագութեամբ» (Պիսիդ. վեց.): «Ձձեռս և զմիտս վերահամբառնամք մերձդ ամենից» (Շ. տաղ):

Ինչպես երևում է այս բառերի տարժամանակյա իմաստների քննությունից, ածականական արժեքը զարգացել է այնպիսի երկարժեք բառերի շրջանակներում, որոնք ունեն թե՛ նյութական բովանդակություն (մակբայ), թե՛ սպասարկու դեր (նախադրություն):

Այս կարգի բառերի իմաստափոխական ուղին բնութագրվում է նրանով, որ հիմնականում լիմաստ բառերն են ենթարկվել իմաստաարժեքային փոփոխությունների (անցում դեպի անունները կամ դեպի սպասարկու բառերը), մինչդեռ շատ հազվադեպ կարող է սպասարկու բառերի մեջ զարգանալ նյութական բովանդակություն:

Ամփոփենք:

1. Խոսքիմասային տարարժեքությունը քերականական այնպիսի իրողություն է, որտեղ առկա են արտահայտության պլանում (ձևով) շտարբերվող և բովանդակության պլանում (իմաստով) հակադրվող միավորների խմբեր:

2. Թե՛ նախադրություն և թե՛ հինհայերենյան շրջանների տարարժեք (եռարժեք) բառերը տարժամանակյա գործընթացի հետևանք են:

3. Տարժամանակյա մոտեցման դեպքում հինհայերենյան իմաստափոխությունը կարելի է տարբերակել նախադրային շրջանի իմաստափոխությունից:

4. Հինհայերենյան շրջանի եռարժեք բառերը ձևավորվել են նախադրային շրջանից ժառանգած երկարժեք բառերի ձևաբանական բաղմիմաստության ծավալի ընդարձակման հետևանքով:

5. Խոսքիմասային եռարժեք բառերը հին հայերենում առաջացել են երկարժեք>եռարժեք տեղաշարժերի հետևյալ մոդելներով. գոյ. ||ած.>մկբ., ած. ||մկբ. և մկբ. ||նխդր.

գոյ.

ած.:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղաթ.—Աղաթանդեղայ Պատմութիւն Հայոց. Տփլիս, 1909:

Ածար.—Տօնական ճառք և բնմբասացութիւնք Գրիգորի աստուածաբանի (ըստ ՆՀԲ-ի):

Արծր.—Բովմայ Արծրունույ Պատմութիւն. Պետերբուրգ, 1887:

Բրս. մրկ.—Մեկնութիւն Ս. Աւետարանին... արարեալ Բարսեղի... (ըստ ՆՀԲ-ի):

Գանձ.—Հաւարումն եկեղեցական երգոց, որ գանձք... կոչին (ըստ ՆՀԲ-ի):

Եղ.—Եղիշլի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին. Երևան, 1957:

Իգն.—Մեկնութիւն Ս. Աւետարանին Ղուկասու՝ Իգնատիոսի վարդապետի (ըստ ՆՀԲ-ի):

Լաստ.—Պատմութիւն Արիստակէսի Լաստիվերտցույ (ըստ ՆՀԲ-ի):

Լմր. առակ—Ներսիսի Լամբրոնացույ Տեսութիւն առակաց Սողոմոնի (ըստ ՆՀԲ-ի):

Խոր.—Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց. Տփլիս, 1913:

¹⁷ «Աստվածաշնչում» հանդիպում են ածականական կիրառության դեպքեր միայն բաղադրյալ ստորոգյալի կազմում. այդպիսի կառույցներում ՆՀԲ-ն մերձ բառին վերագրում է մակբայի խոսքիմասային արժեք. «Մերձ է մեզ փրկութիւն»։ «Մերձ է օր Տեառն»։ «Մերձ էին զգրունսն խորտակել» (ՆՀԲ, 2, 255):

- հոսր. — հոսրոյնու Անձեւացեաց մեկնութիւն ժամկարգութեան (բստ նշԲ-ի);
 Կլիմաք. — Յովհ. Կլիմաքոսի Գիրք Կրօնաւորական առաքինութեանց (բստ նշԲ-ի);
 Կռ. — Կ. Նրուսաղեմայ հայրապետի Կոչումն ընծայութեան (բստ նշԲ-ի);
 Ղեւ. — Ղեւոնդեայ վարդապետի Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1887;
 Յհ. Իմ. — Յովհաննու Իմաստասիրի օձնեցւոյ Մատենագրութիւնք (բստ նշԲ-ի);
 Յհ. Կթ. — Յովհաննէս Կաթողիկոսի Դրախտանակերտցւոյ Պատմութիւն Հայոց (բստ նշԲ-ի);
 Յճիւ. — Գրիգորի լուսաւորչի Յաճախապատում ձառք (բստ նշԲ-ի);
 Նար. — Գրիգորի Նարեկայ Մատենագրութիւնք (բստ նշԲ-ի);
 Ոսկ. Յհ. — Յովհ. Ոսկերեանի Մեկնութիւն Աւետարանին Յոհաննու (բստ նշԲ-ի);
 Շար. — Չայրաղ Շարական (բստ նշԲ-ի);
 Շիր. — Անահայի Շիրակունոյ Մնացորդք բանից (բստ նշԲ-ի);
 Շ. Բղթ. — Բուղթք Տ. Ներսիսի Շնորհալոյ կաթողիկոսի Հայոց (բստ նշԲ-ի);
 Շ. տաղ — Ն. Շնորհալոյ... Գանձք և տաղք (բստ նշԲ-ի);
 Ոսկ. Մտթ. — Յովհ. Ոսկերեանի յաւետարանագիրն Մտթէոս (բստ նշԲ-ի);
 Ոսկ. Յհ. — Յովհ. Ոսկերեանի Մեկնութիւն Աւետարանին Յոհաննու (բստ նշԲ-ի);
 Պիսիգ. վեց. — Պիսիգեայ վեցօրեայք (բստ նշԲ-ի);
 Պիս. — Յաղագս Պիտոյից (բստ նշԲ-ի);
 Վրբ. հց. — Վարբ սրբոց հարանց (բստ նշԲ-ի);
 Աստվածաշնչի համառոտագրութիւնները տրված են հայադիտութեան մէջ ընդունված կարգով. Ինչպես՝ Բ. Մակ. — Մակարայեցիք, գիրք Բ., Առակ. — Առակք Սողոմոնի և այլն:

МОРФОЛОГИЧЕСКИ ТРЕХВАЛЕНТНЫЕ СЛОВА В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

(Опыт диахронного исследования)

Л. М. ХАЧАТРЯН

Р е з ю м е

В ходе развития языка слова с морфологической полисемией могут создавать несколько частеречных значений: они проявляют двух-, трех- и даже четырехвалентность. Морфологически трехвалентные слова в древнеармянском языке могут быть рассмотрены в двух аспектах: синхронном и диахронном. В синхронном плане морфологически трехвалентные слова считаются наследием дописьменного периода развития армянского языка. В диахронном аспекте наблюдаются те слова с морфологической полисемией, которые образовались в рамках древнеармянского языка — путем частеречных переходов от двухвалентности к трехвалентности. В этом отношении возможны такие варианты сдвигов:

- а) *դաշն* — союз. (союз) || прил. (гармоничный) > нар. (мягко).
 б) *անհուն* — прил. (беспредельный) || нар. (беспределью),
 ↓
 сущ. (беспредельность)
 в) *մերձ* — нар. (прил. близ) || предл. (около, возле),
 ↓
 прил. (близкий).